



134. ՄՈՐԸ ԼՈՒՋԻՆ

Խոխան խոնրղը-մոնրղն պեներ ա իլնլ կյուղընալիս: Մարն ըսելիս ա իլնլ.—Քա՛լա, էլ պեր: Խոխան էլլա յար կյուղանում-պոնրնում, մարը միշտ թա՛ էլլա պեր: Խոխան քանի մըծանում ար, մընծ-մընծ պեներ ար կյուղանում պոնրնում: Մարը ուրխանում ար, խուխեն էլլա ասում, թա՛ պեր:

Ախրը վերը խոխան վըեր հսած-փսած տղամարթ ա տըրն-նում, ըսկսում ա կով, ծի կյուղանալը: Մին օր էլ տրան փոնում ըն, վըեր տանեն կախ տան: Հենց վըեր քյանդիրն օզում ըն քցին պոկը, տղան ասում ա.—Սըրտումըս մին մուրաղ կա, թողեթյ տըրնղ տամ, նոր ինձ հինչ օզում ըթ, ըրեթյ Հըրցնում ըն, թա հի՛նչ ըս օզում, տղան ասում ա.—Օզում ըմ իմոր վերչին գննումը տըրեսամ...

Մարը պոնրնում ըն, վըեր օզում ա թա տղեն մուտանա կուլավն ինգյնի, տղան մորը թա՛ լոնղիտ տոն կալ, լոնղվատ պալիմ... Մարը լոնղին վըեր տոն ա օնում, տղան լոնղվան հունց կծում ա, վըեր մարը օշը տանում ա, վըեր ինգյնում-մըրնում:

Տղան ասում ա.—Հինչ վըեր ըրալ ա, լոխ էս լոնղին ա ըրալ: